39· ելոց ամենեցուն ողորմեսցի եւ զկազմօղի սորի
40· ն Գրիգորի եւ Սարգսի։

31. *Թալինի Մայր եկեղեցու ձախ աւանդատան պատի վերայ, բարձր եղել են երկու արձանագրութիւն որմնկարների մասին ծեփի վերայ, տարաբաղդաբար մէկը բոլորովին փչացած է, իսկ միւսը կիսով չափ։ Արձանագրութիւնը թուական չունի, բայց հնագրական նշաններից դատելով կարող է Ժ. դարու գործ լինել։*

Ես Մովսէս նու | աստ եւ անարժա(ն) | եկե-
ղեցապան | սրբոյ եկեղեց | ւ ոյս (ընդգծուածը մաշուած)
ետու կեն | դանագրել զս | ուրբ կաթողի (ընգծուածը
ջնջուած) | կէս ի բարեխաւս | ութիւն ինձ եւ | ծն...

32. *Մատ. Ս. Էջմ. № 1984/1958, Հակաճառութիւն Տիմոթէոս Էլուրոսի* (Αἰλουρος) մագաղաթ, *հաստ. 321 թերթ, սկզբից ու վերջից մի քանի թերթով նորոգած։ ԳԻՐ. Միջին, ուղղանկիւն երկաթագիր, վերնագրերը փոքր երկաթագրով, մի էջեան $22\frac{1}{2}\times12\frac{1}{2}$ սմ.։ ԳՐԻՉ, ՍՏԱՑՈՂ և ԺԱՄԱՆԱԿ. Անյայտ, բայց նախ քան Ժ. դար (Ը—Թ), հնագրական նշաններից դատելով։*

Ծանօթ. *Այս Ձ.-ը* unicum *է, յունարէն բնագիրը կորած է և հայերէն թարգմանութեամբ միակ ձեռագիրն է։ Ուրիշ լեզուով ամբողջական թարգմանութիւն յայտնի չէ։ Հրատարակել են Կարապետ ծ. վարդապետ և Երուանդ վարդապետ. Ս. Էջմ. 1908 թ։*

Նկարուած է 128ա. բնագիրը և մեր նկարը նոյն մեծութեամբ։

33. 34. *Մատ. Երուս. Ս. Յակոբ. № 2555. Աւետարան, մեծադիր,* մագաղաթ *հաստ և կոշտ։ Ձեռագիրն անթուական, բայց մէկը հայ գրչութեան Ժ. դարուց առաջ եղած ծաղկողներից։ Կարծում ենք* Ը—Թ. դարու գործ։ *Բուն ձեռագիրը գրուած է խոշոր,* բոլորաձեւ երկաթագրով։

ա) Բնագրի առաջին տողը 10,2 սմ., մեր նկարը 9,5 սմ.։

բ) 12ա. տողի երկ. 9,1 սմ., մեր նկարը 8, 9 սմ. գրեթէ նոյն մեծութեամբ։

35. *Պատառիկ* (Fragment) *Տ. Խաչիկ ծ. վարդապետի։ Մի թերթ* $34\frac{1}{2}\times25\frac{1}{2}$ *սմ.,* մագաղաթ, *յիշատակարան պոկած Ջիւանշիրի գաւառի Մեծ շէն գիւղի աւետարանից։ ԳԻՐ. Բոլորաձև երկաթագիր, թէ բնագիրը և թէ յիշատակարանը։ ԳՐԻՉ Թուխթայել. ՍՏԱՑՈՂ. Աշոտ իշխան.* Տեղ, *Կոստանդնուպոլիս։* Ժամանակ. *909 թ. փրկչական. ՅԾԸ. թ. Հ.։*

Ամբողջ յիշատակարանն այս է. «... զբաղձանս ներանձնա|ւեալ նունախոհի և մտա|հարուստ ընթերցասիր|ական ուշմագունի և|մեծաքանչ անուն| հայոց սպայապետի | առնելով ամենափառ | և հրաշազարդեալ ա՞ծ|ավայելուչ